



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

CENTRE FOR POLICY STUDIES

*Վարդան Լարյաջյան*

# Խոսքի ազատության ու ատելության խոսքի տարանջատման սահմանները

Հրապարակումը լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում:

Երևան, ապրիլ 2021

Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում կազմակերպվել են դասընթացներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (մասնավորապես մարզային և տարածաշրջանային հասարակական ու երիտասարդական կազմակերպություններից), երիտասարդ վերլուծաբանների, ինչպես նաև ուսանողների համար: Դասընթացներում ներառված էին հետևյալ թեմաները.

- Հետազոտության դիզայն և մեթոդներ,
- Մեդիագրագիտություն. արշավ արդի լրատվական մանիպուլյացիաների դեմ,
- Արդյունավետ հաղորդակցության կազմակերպում ճգնաժամային պայմաններում,
- Ճգնաժամային իրավիճակներում սոցիալական ՁԼՄ-ներում ատելության խոսքի դրսևորումները:

Դասընթացների նպատակն էր նպաստել մասնակիցների կարողությունների զարգացմանը՝ հետագայում արդյունավետ հետազոտական աշխատանքներ իրականացնելու և հասարակության լայն շերտերում մեդիագրագիտությունը խթանող նախաձեռնություններով հանդես գալու համար: Մասնակիցները նաև ունեցել են գործնական աշխատանք կատարելու հնարավորություն՝ դասընթացները վարած փորձագետների խորհրդատվությամբ նախապատրաստելով իրենց հոդվածները:

Ծրագրի մասնակիցների հրապարակումները չեն արտահայտում Քաղաքականության հետազոտական կենտրոնի, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կամ որևէ այլ կառույցի տեսակետը:

Հոդվածաշարի խմբագիրներ՝ Արմեն Գրիգորյան, Վիկտորյա Մելքոնյան

*Վարդան Լաբլաջյանը սովորում է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Ազգային անվտանգություն» բաժնի մագիստրատուրայում և Հանրային հեռուստաընկերության Մեդիա ակադեմիայի ունկնդիր է:*

*Հեղինակը հատուկ շնորհակալություն է հայտնում Անժելա Ամիրջանյանին, ում անցկացրած դասընթացով ու խորհրդատվությամբ է մեծապես պայմանավորված այս աշխատանքի արդյունքը: Առանց Ա. Ամիրջանյանի օժանդակության անհնար կլիներ հասնել նման արդյունքի և բարձրաձայնել այնպիսի հարցերի մասին, որոնք գուցե լսելի չէին եղել:*

## **Խոսքի ազատության ու ատելության խոսքի տարանջատման սահմանները**

Արտահայտվելու կամ խոսքի ազատության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է և հաճախ անվանվում է նաև «իրավունքների իրավունք», քանի որ երաշխավորում է մյուս բոլոր իրավունքների գոյությունը: Արտահայտվելու ազատությունը ամրագրված է մի շարք միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում, որոնց թվում են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիան և այլն:

Խոսքի ազատությունն ամուր ժողովրդավարության հենասյունն է, որը ցանկացած հասարակության և պետության զարգացման կանոնավոր առաջընթացն է ապահովում: Սակայն ժամանակակից տեղեկատվական աշխարհում տեղի ունեցող խոսքի և գաղափարների անկառավարելի ու անվերահսկելի շրջապտույտը հանգեցրել է խոսքի ազատության չարաշահումների, որոնք արտահայտվում են ատելության խոսքի և ապատեղեկատվության տեսքով, ինչի արդյունքում ազատ խոսքն աստիճանաբար վերածվում է մանիպուլյացիոն գործիքի՝ վտանգելով թե՛ ժողովրդավարական հասարակարգի կայունությունը, թե՛ վերջինիս արժեքային համակարգը:

Միջազգային տարբեր փաստաթղթերում հստակեցված են խոսքի ազատության տեղն ու դերը հասարակության կյանքում: Այդուհանդերձ, խոսքի ազատությունը տարբեր երկրներում բախման մեջ է ատելության խոսքի հետ:

Չափանիշները, որոնք կարգավորում են ատելության խոսքը, տարբեր երկրներում տարբեր են: Եվրոպական միության անդամ երկրների մեծ մասում ատելության խոսքը քրեական հանցագործություն է: Միացյալ Թագավորությունում ևս ռասայական կամ կրոնական ատելություն հրահրող խոսքը քրեական

հանցագործություն է: Նմանատիպ օրենսդրական կարգավորումներ՝ որոշ տարբերություններով, գոյություն ունեն նաև մի շարք այլ զարգացած ժողովրդավարական երկրներում, ինչպիսիք են Ավստրալիան, Դանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Շվեդիան և Նոր Զելանդիան:<sup>1</sup> Ի տարբերություն այդ երկրների՝ ԱՄՆ-ում կարծիքը, այդ թվում՝ խոսքի ազատությունը պաշտպանվում է բացարձակ գերակայությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է բռնության հստակ և անխուսափելի վտանգ:<sup>2</sup>

Կարգավորող մեխանիզմների տարբերությունը նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ «ատելության խոսք» տերմինը համընդհանուր սահմանում չունի և տարբեր կերպ է մեկնաբանվում: Բերենք մի քանի սահմանումներ: Քեմբրիջի բառարանում «ատելության խոսքը» սահմանվում է որպես «հանրային խոսք, որն արտահայտում է ատելություն կամ խրախուսում է բռնություն անձի կամ խմբի նկատմամբ՝ հիմնվելով այնպիսի հատկանիշի վրա, ինչպիսին է ռասան, դավանանքը, սեռը կամ սեռական կողմնորոշումը»:<sup>3</sup> Ըստ Օքսֆորդի բառարանի՝ վիրավորական, սպառնացող խոսքը կամ գրությունը նախապաշարմունք է հայտնում էթնիկ պատկանելության, կրոնի, սեռական կողմնորոշման կամ նմանատիպ հատկանիշների հիման վրա:<sup>4</sup>

Հայաստանում ո՛չ Սահմանադրական, ո՛չ էլ օրենսդրական մակարդակներում, ոչ էլ իրավակիրառ պրակտիկայում բացահայտված չէ ատելություն, ատելության խոսք տերմինների էությունը: Թեպետ որոշ չափով ատելության խոսք կամ ատելության քարոզ տարածողների դեմ պայքարի փորձեր արվում են տարբեր օրենսդրական մակարդակներում (ՀՀ Սահմանադրություն, Քրեական օրենսգիրք, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն, Կիբեռհանցագործությունների մասին միջազգային կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն),<sup>5</sup> սակայն տերմինի հստակ բացատրության բացակայության պայմաններում այն շատ դեպքերում տարբերակային պատճառ է դառնում:

Ներկայիս տեղեկատվական և տեխնոլոգիական դարաշրջանում, երբ խոսքի ազատությունն անվերահսկելի է դարձել, «չորրորդ իշխանությունը»՝ մեդիան, որի նպատակը օրենսդիր, գործադիր և դատական մարմիններին լրացնելն ու համալրելն է՝ հասարակական կարծիք ձևավորողի և խոսքի ազատության ապահովողի գլխավոր առաքելությանը զուգընթաց, ապատեղեկատվության, ապակողմնորոշող քարոզչության ու ատելության խոսքի տարածման միջոցով նպաստում է ժողովրդավարական համակարգի նկատմամբ վստահության կտրուկ նվազմանը:

Ակնհայտորեն, վերոնշյալ մարտահրավերների դեմ պայքարը ենթադրում է ավելի կոշտ մոտեցում այնպիսի լրատվության ու գաղափարների նկատմամբ, որոնք

<sup>1</sup> Jeffrey W. Howard, Free Speech and Hate Speech, 2019, <https://core.ac.uk/download/pdf/219542798.pdf>

<sup>2</sup> Տե՛ս <http://millab.ge/ar/mil-resources/any/32/any/>

<sup>3</sup> Տե՛ս <https://dictionary.cambridge.org/dictionary/english/hate-speech>

<sup>4</sup> Տե՛ս [https://www.lexico.com/definition/hate\\_speech](https://www.lexico.com/definition/hate_speech)

<sup>5</sup> Ատելության խոսքի վերաբերյալ իրավական կարգավորումները, 2019, <https://bit.ly/3btfjMk>

հասարակության շրջանում կարող են քարոզչական ազդեցություն ունենալ, այդ թվում՝ ատելության քարոզի: Ատելության խոսքը, ապատեղեկատվությունը և ապակողմնորոշող քարոզչությունը թե՛ հեռուստատեսությամբ, թե՛ համացանցով նպատակ ունեն հասարակության մոտ ստեղծել անհանդուրժողականության, ժողովրդավարական արժեքների նկատմամբ անվստահության մթնոլորտ, որի վերջնարդյունքը կարող է լինել ժողովրդավարական հասարակարգի խարխուլումը:

Հայաստանյան իրականությունում սա առավել քան ակտուալ մարտահրավեր է: Հայաստանում 2018 թ. տեղի ունեցած իրադարձությունները հիմք են դրել քաղաքական ռեժիմի փոխակերպման գործընթացի, որի ցուցիչներից մեկը հենց խոսքի ազատությունն է: Առցանց լրատվական դաշտում, սոցիալական ցանցերում զգալի ազատականացում է տեղի ունեցել: Հարկ ենք համարում նշել, որ ըստ Լրագրողներ առանց սահմանների կազմակերպության կողմից 2019 թ. հրապարակված զեկույցի Մամուլի ազատության համաշխարհային ցուցանիշային աղյուսակում աշխարհի 180 պետությունների շարքում Հայաստանը 61-րդ տեղում էր՝ Վրաստանի, Լեհաստանի և Խորվաթիայի հետ գրեթե նույն մակարդակի վրա:<sup>6</sup>

Առաջին հայացքից այս առաջընթացը փաստում է ժողովրդավարացմանն ուղղված Հայաստանի հաստատուն քայլերի մասին, սակայն միևնույն ժամանակ առկա է երկակի վտանգ, որ երկարաժամկետ հեռանկարում այսչափ անհարկի ազատականացումը կարող է վնասել հենց հայկական ժողովրդավարությանը: Նախևառաջ, պետությունը տեղեկատվական հոսքերը վերահսկելու պրակտիկա որդեգրելու փոխարեն ինտենսիվ կերպով օգտագործում է ներկայիս համացանցի ընձեռած հնարավորությունները՝ իր տեսակետները և գաղափարները առավել հանրամատչելի դարձնելու և հանրային օրակարգ ձևավորելու համար: Քաղաքական հաղորդակցությունը և դիսկուրսը տեղափոխվել են առցանց հարթակ՝ նպաստելով ատելության խոսքի և ապակողմնորոշող տեղեկատվության տարածման սրընթաց աճին: Մյուս կողմից, առցանց դաշտում, այդ թվում՝ լրատվության, իշխող քաղաքական ուժը նվազ ներկայացված է և էապես զիջում է նախորդ իշխանական վարչակազմին և վերջինիս հետ փոխկապակցված անձանց: Տեղեկատվական հարթակում նման անհավասարակշռությունը իշխանության և ընդդիմադիր ուժերի միջև դեռևս աշխատում է հօգուտ ժողովրդավարության, սակայն հետագայում կարող է բացասական հետևանքներ ունենալ: Գործող վարչակազմը ներկայումս գտնվում է տեղեկատվական ու քարոզչական գրոհների թիրախում, իսկ ընդդիմադիր շրջանակները վերոնշյալ ռեսուրսային առավելության շնորհիվ օգտագործում են մրցակցության կոշտ սկզբունքներ՝ գեներացնելով ատելության խոսք, այդ թվում՝ ցենզուրայից դուրս գտնվող մեկնաբանություններ, սպառնալիքներ և կեղծ տեղեկատվություն: Ատելության խոսքի ու կեղծ լրատվության բարձր մակարդակն ու հետևողական տարածումը խոսում են ներքին տեղեկատվական պատերազմների մասին: Ազատության խոսքի զանգվածային չարաշահումները վստահաբար կարող են էական վնաս հասցնել

<sup>6</sup> Լրագրողներ առանց սահմանների. «Մեդիաբազմազանությունը Հայաստանում ծաղկում է», 21 ապրիլի 2020 թ., <https://www.azatutyun.am/a/30567899.html>

պետական ինստիտուտների վարկանիշին, ինչպես նաև ժողովրդավարական կարգի լեգիտիմությանը: Այս համատեքստում կարևոր է պետության կողմից տեղեկատվական անվտանգության պաշտպանությունը:

Ուստի, պետությունը պարտավոր է ձեռնարկել որոշակի միջոցներ՝ խոսքի ազատության ճշգրիտ իրավական սահմանները գծելու և տեղեկատվական գրոհները կասեցնելու ուղղությամբ: Ընդ որում, պետությունը պետք է այնպիսի միջոցառումներ ձեռնարկի, որ ուղղված կլինեն ատելության խոսքի և կեղծ լրատվության դրսևորումների վերացմանը, այլև առհասարակ տեղեկատվական դաշտի վերափոխմանն ու լրատվական գործունեության նոր մշակույթի ձևավորմանը: Վերջինիս իրագործումը հնարավոր կլինի այն պարագայում, երբ պետությունն առցանց լրատվամիջոցների իրավական կարգավիճակը հստակեցնի ու դրանց համար մշակի մոնիտորինգային արդյունավետ մեխանիզմներ: Տեսությունը փաստում է, որ պետությունը միայնակ չի կարող հասնել վերոնշյալին, դրանում պետք է ակտիվ ներգրավվեն նաև լրատվամիջոցները, գիտությունը, կրթության պատասխատուները՝ սկսած մանկապարտեզներից, ինչպես նաև մասնավոր սեկտորը, օրինակ՝ Ֆեյսբուքը, Գուգլը և այլն: Այս գործում էական դերակատարում կարող է ունենալ քաղաքացիական հասարակությունը: